

ԹԱՂԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑԻՆ

*Որ շնորհեցեր հայաստանայց
գառարք առաքեալն Թաղէոս, եւ
ծամուցեր զՔո Միածինդ՝ մե-
րող գթած Հայր երկմաւոր,
օրհնեմք զՔեզ ամլոյի ճայմիւ:*

Տէր յերկնից

Ս. Թաղէոսին քարոզչութեան վայր վիճակուեց գլխաւորաբար Հայաստան Աշխարհը: Ինչպէս ամէն տեղ, մեր երկրի մէջ եւս, զանազան կողմերում, գոյութիւն ունեին հրեական գաղութներ: Այսպէս. Արտաշատ, Երուանդաշատ, Զարեհաւան, Զարիշատ, Վան, եւ այլն, որտեղ բաւական մեծ էր հրեաների թիւը: Շատերը Մեծն Տիգրանի (ն.թ. 94-55թթ.) ձեռքով, գերի էին բերուած Պաղեստինից: Ամէն գաղութ ունէր իր աղօթաւայր-ժողովարանը (սինագոգը): Բոլոր առաքեալների նման, Թաղէոս եւս, նախապէս հրեական սինագոգներում սկսեց իր քարոզչութիւնը: Հայերը այդ ժամանակ հեթանոս էին եւ զանազան աստուածների կուտքեր-արձաններն ու պատկերներն էին պաշտում, դրանց համար զոհեր մատուցում եւ երկրպագում:

Ինչպէս յայտնի է վարքագրական գրականութիւնից՝ Ս. Թաղէոսն իր ազգակիցներից յետոյ կամեցաւ դարձի բերել նաեւ մեր ժողովուրդը, քանզի Տէրը պատուիրել էր. «Գնացէ՛ք աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէ՛ք նրանց պահել

այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի» (Մտք. ԻԲ. 19,20): Ուստի եւ առաքեալը, հնազադուելով Քրիստոսին, ամէն տեղ, ամենակիւ քարոզում էր Աւետարանի ճշմարտութիւնը: Իր խօսքը շատ ազդու էր, որովհետեւ հաւատով եւ համոզումով էր խօսում:

Դիմենք մեր եկեղեցու «Յայսմատութեան»-ի վկայաբանութեան պատմութեանը:

«Քրիստոսի առաքեալ Թադէոսը, Սուրբ Հոգու հրամանով եկաւ ասորիների Միջագետքը, հայոց եւ ասորաց թագաւորի՝ Արգարի մօտ: Զանգի նա ապրում էր այն ժամանակ, երբ Քրիստոս մարմնով երևաց Հրեաստանում եւ լսեց այն նշանների եւ սքանչելի բժշկութիւնների մասին, որ կատարում էր Յիսուս: Թագաւորը թուղթ ուղարկեց Տիրոջը եւ կանչեց նրան իր քաղաքը, որովհետեւ տառապում էր անբուժելի հիւանդութեամբ: Լյս մասին վկայում է Յովհաննէսի աւետարանը.

«Կային այնտեղ հեթանոսներից ոմանք, որոնք մօտեցան Փիլիպպոսին եւ ասացին. «Կամենում ենք Յիսուսին տեսնել», եւ Անդրեասը Փիլիպպոսի հետ միասին բերեց նրանց Քրիստոսի մօտ, որը եւ ասաց. «Հասաւ ժամը, որ փառաւորովի Մարդու Որդին» (Յովհ. ԺԲ 20-23):

Արդ, ինքը՝ Տէրը չգնաց, բայց Արգարին թղթի-նամակի արժանացրեց եւ խօստացաւ իր համբարձումից յետոյ աշակերտներից ուղարկել եւ նրան բժշկել: Իսկ Սուրբ Հոգու իջնելուց յետոյ, Թովմասը՝ տասներկուսից մէկը՝ երկուորեակ անւանուածը, ուղարկեց Թադէոսին Ուռհա (սրա մասին ոմանք ասում են, թէ իր երկուորեակ եղբայրն էր):

Թադէոսը գալով իջեւանեց Տուրիա անունով մի մարդու տանը եւ բժշկութիւններ էր կատարում քաղաքում:

Արգարը լսելով ասաց. «Նա՛ է, ում խոստացել էր ուղարկել ինձ Զրիստոս»։ Ուղարկեց եւ կանչեց առաքեալին։

Երբ առաքեալը ներս մտաւ, թագաւորը նրա վրայ սքանչելի նշան տեսաւ եւ զարհուրած ընկաւ ու երկրպագեց նրան։ Առաքեալը ձեռքը դրեց եւ բժշկուեց թագաւորը։ Արգիային էլ բժշկեց չարաչար ցաւերից, որ մեծ մարդ էր արքունիքում։ Իսկ ոմն կերպասագործ Ադդէի, որ հրեայ էր եւ իրեն աշակերտ, ձեռնադրեց նրանց համար եպիսկոպոս։

Մկրտած լինելով թագաւորին, իշխաններին եւ բոլոր քաղաքացիներին, Թադէոսը ելաւ եւ գնաց Հայք՝ Արգարի նամակով, որը Հայոց Սանատրուկ թագաւորը՝ նրա ազգականը, չընդունեց։ Բայց նրա դուստրը՝ Սանդուխտ, Զրիստոսի հաւատաց եւ առաքեալի կողմից մկրտուեց, նահատակուեց իր հօրից, որպէս եւ գրուած է իր պատմութեան մէջ։ (Սանդուխտ կոյս վկայուի, Յայսմատուք, Կ. Պոլիս 1834, հատ. Բ, 292)։

Սանդուխտի մարտիրոսուելուց յետոյ, Զրիստոս տեսիլքի մէջ երեւաց Թադէոսին եւ ասաց. «Քաջալերուիր, որովհետեւ այսօր ինձ մօտ պէտք է գաս»։

Աշակերտները սկսեցին արտասուել, երբ այս մասին պատմեց առաքեալը։

Սանատրուկ թագաւորի հրամանով երկու իշխաններ եկան, կապեցին նրան եւ տարան թագաւորի մօտ։

Ասաց թագաւորը.

- Ինչո՞ւ մոլորեցրիր իմ սքանչելագեղ դուստրը եւ ինձ սպաննել տուեցիր նրան։

- Զո դուստրը փոխուեց իր անմահ փեսայի՝ Զրիստոսի մօտ եւ պսակուեց անթառամ պսակով, - պատասխանեց առաքեալը։

Բարկացած թագաւորը հրամայեց նետել առաքեալին գազանների արգելանոցը, իսկ նրանք գալով խոնարհուում էին

եւ լիզում սուրբի ուղքերը: Թագաւորը հրամայեց կրակ վառել եւ նրան մէջը գցել, սակայն ուժգին քամի ելաւ եւ ցրեց կրակը: Առաքեալը մնաց անվնաս: Այն օրը Քրիստոսի հաւատացին մօտաւորապէս 400 հոգի:

Այս տարակուսած թագաւորը հրամայեց նրան սրով սպաննել: Իսկ առաքեալը օրհնեց հաւատացեալներին, իր աշակերտներից ոմն Զաքարիայի առաջնորդ կարգեց նրանց ուսասաց. «Ելէ՛ք տեսնելու համար իմ նահատակութիւնը»:

Զինուորները առան երանելիին, հանեցին ձորակից մի բարձրաւանդակ, վիմամէջ տեղ: Իսկ նա ձեռքերը տարածած աղօթելով ասում էր. «Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի՛ անտեսիր իմ վիճակը, մի՛ թող սրանց կռապաշտ մոլորութեան մէջ, այլ լուսաւորիր յարմար ժամանակ քո հաւատի գիտութեամբ»:

Այս դահիճները նրան սրով նահատակեցին եւ նրա մարմինը ամփոփուեց պատռուած վէմի մէջ՝ Արտազ գաւառում»:

Արդ, Հայաստանեայց մեծ հայրապետ Գրիգոր Լուսաւորչից յետոյ, նրա աստուածատու որդիների եւ թոռների օրերին յայտնուեցին Թաղէոս առաքեալի եւ Սանդովատ կոյսի նշխարները իրենց կատարման վայրում՝ Արտազ գաւառի մէջ:

Արտազը, որտեղ ցայսօր Թաղէոս առաքեալի անունով վանք գոյութիւն ունի, պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի նշանաւոր գաւառներից էր: Հին Արտազին համապատասխանում է մասամբ այժմեական Մակու գաւառը, որ Պարսկաստանի հիւսիսակողմն է (լեռնային եւ կիսովին դաշտային տարածք):

Յուդա-Թաղէոս առաքեալը հանդիսացել է առաջին նահատակ-առաքեալն ու լուսաւորիչը Հայաստանի եւ հիմնադիրը Հայաստանեայց Առաքելական եւ Ընդանրական, Ուղղափառ եւ Սուրբ Եկեղեցու, որը տարին երեք անգամ ալատ-

տւմ է յիշատակը իր լուսատրիչ առաքեալի: Յուլիս-օգոստոսի ընթացքին՝ Սանդուխտ կոյսի, նոյեմբեր-դեկտեմբերին՝ Բարթոլիմէոս առաքեալի եւ տասներկու առաքեալների հետ միասին:

Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի միաբանութիւնը, սքանչելագործ սուրբի յիշատակը կատարելուց մէկ օր առաջ, երեկոյեան ժամերգութեան աւարտին նախատօնակ է կատարում: Այդ ընթացքում երգուում են առաքեալի բարեխօսութիւնը եւ օգնականութիւնը խնդրող շարականներ եւ դուրս է բերուում սրբազան լուսատրիչի պատուական նշխարը: Արտասանւում է քարոզ եւ կարդացւում է աղօթք առ փրկիչն մեր Զրիստոս, միջնորդութեամբ մեծ եւ հզօր բարեխօս՝ Թադէոս առաքեալի: Յաջորդ օրը մատուցւում է սուրբ եւ անմահ պատարագ:

Աւարտին վկայակոչենք Նոր Կտակարանից յայտնի, իր արդիականութիւնը չկորցրած մի հարց ու պատասխան, որ տեղի է ունեցաւ մօտ 2000 տարի առաջ, մեծ եւ ճշմարիտ Ոստոյցի եւ իր հաւատարիմ աշակերտ՝ Յուդա-Թադէոսի միջեւ.

«Յուդան (ոչ Իսկարիովտացին) ասաց նրան. «Տէ՛ր, ինչպէ՞ս եղաւ, որ քեզ պիտի յայտնեա մեզ եւ ոչ թէ աշխարհին»: Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Եթէ մէկը սիրում է ինձ, իմ խօսքը կը պահի, եւ իմ Հայրը նրան կը սիրի, եւ նրա մօտ կը գանք ու նրա մօտ կ'օրեւանենք: Եւ ով ինձ չի սիրում, իմ խօսքը չի պահում. եւ իմ խօսքը, որ լսում եք, իմը չէ, այլ՝ Հօրը, որ ինձ ուղարկեց» (Յովհ. ԺԴ 22-24):

ԱՐՄԷՆ ՍՐԿ. ԱԹԱՋԱՆԵԱՆ